

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով
Ո Ր Ո Շ ՈՒ Մ 49/2
1 սեպտեմբերի 2017թ.

Քննարկվեց «ՎԻՄՊԵՐԳ» ՍՊԸ գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Իրավաբանական վարչության պետի 14.06.2017թ. N 328/09 որոշման դեմ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 20.02.2017թ. N1011913 հանձնարարագրի համաձայն «ՎԻՄՊԵՐԳ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև՝ ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ 18.05.2017թ. N1011913 ակտը (այսուհետ նաև՝ Ակտ), որով լրացուցիչ վճարման է առաջադրվել ընդամենը 6.493.785 դրամ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընկերության կողմից սահմանված ժամկետում չի վճարվել Ակտով առաջադրված պարտավորությունը, ուստի ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի կողմից 14.06.2017թ. ընդունվել է N 328/09 որոշումը (այսուհետ նաև՝ Որոշում) «ՎԻՄՊԵՐԳ» ՍՊԸ-ից 6.493.785 դրամ պարտավորության գումար գանձելու մասին:

Նշվեց նաև, որ «ՎԻՄՊԵՐԳ» ՍՊԸ-ն ՀՀ վարչական դատարան է ներկայացրել հայցադիմում ընդդեմ ՀՀ ԿԱ ՊԵԿ 18.05.2017թ. N1011913 ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին: ՀՀ վարչական դատարանի 21.07.2017թ. որոշման համաձայն հայցադիմումն ընդունվել է վարույթ և նշանակվել է նախնական դատական նիստ (վարչական գործ թիվ ՎԴ/6900/05/17):

Գանգատաբերը գտնում է, որ առկա է ՀՀ ԿԱ ՊԵԿ 18.05.2017թ. N1011913 ակտը, որի անբողոքարկելի դառնալու դեպքում հարկային մարմինը կարող է այն ուղարկել ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայություն հարկադիր կատարման կամ դատական կարգով հայց ներկայացնել ՀՀ վարչական դատարան Ակտում նշված գումարը բռնագանձելու պահանջով, և այդ պայմաններում վարչական մարմինը չունի որևէ իրավական հիմք նույն փաստական հանգամանքներով, նույն ընկերության նկատմամբ նոր վարչական վարույթ հարուցելու և խնդրո առարկա Որոշումն ընդունելու համար: Նման դիրքորոշում է արտահայտվել նաև մի քանի դատարանի վճիռներով (օրինակ՝ վարչական գործ թիվ ՎԴ/0271/05/15):

Սակայն հարկ է նշել, որ վերոգրյալ հարցի կապակցությամբ առկա է նաև դատարանի կողմից արտահայտված հակառակ դիրքորոշում: Մասնավորապես, ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը, քննելով ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից բերված վերաքննիչ բողոքը՝ ըստ հայցի ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի ընդդեմ Գևորգ Բալաբեկի Սարգսյանի՝ հօգուտ պետական բյուջեի 250.000 դրամ բռնագանձելու պահանջի մասին, թիվ

ՎԴ2/0091/05/16 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 29.09.2016թ. վճռի դեմ, 06.07.2017թ. կայացված որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 06.07.2017թ. որոշմամբ, մասնավորապես՝ արտահայտվել է հետևյալ դիրքորոշումը. «Վերաքննիչ դատարանը փաստում է նաև, որ առկա չէ որևէ իրավական դրույթ, որով կսահմանափակվեր վարչական մարմնի իրավունքը՝ ստուգման ակտով առաջադրված հարկային պարտավորության և դրա կամավոր չկատարման դեպքում գումարը գանձելու մասին որոշում կայացնելու առումով»:

Քննարկվող դեպքում, առկա է մի իրավիճակ, երբ, ըստ էության, միևնույն հարցի կապակցությամբ առկա են ՀՀ դատարանների կողմից արտահայտված տարբեր դիրքորոշումներ: Հետևապես, քննարկվող հարցի վերաբերյալ վերջնական եզրահանգման հանգելու համար Հանձնաժողովը կարևորում է ՀՀ բարձրագույն դատական ատյանի՝ ՀՀ վճռաբեկ դատարանի, կայացվելիք որոշման դիրքորոշումը:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 14.06.2017թ. N328/09 որոշման կատարումը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 14.06.2017թ. N328/09 որոշման կատարումը կասեցնել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ